

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
30.06.2021թ. նիստի N 12 արձանագրություն

Օրակարգ

Վաստակաշատ պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս.Ք.Գասպարյանին՝ ծննդյան 75 -ամյա հոբելյանի առիթով ԿԳՄՄ նախարարության ոսկե մեդալի արժանացնելու հարցը :

Գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 30-ը, ներկա էին նաև ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, Ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Գևորգյանը, ՀՀ ԿԳՄՄ փոխնախարար ,կ.գ.դ.,պրոֆեսոր Կ. Թռչունյանը, այլ ֆակուլտետների դեկաններ, այլ բուհերի հյուրեր : Գ.Բարսեղյանը ողջունեց գիտխորհրդի կազմին և հյուրերին, շնորհավորեց Ս.Գասպարյանին ծննդյան 75 -ամյա հոբելյանի առիթով և ներկայացրեց նրա կենսագրական և գիտամանկավարժական գործունեության առանցքային տվյալներ: Նա նշեց, որ վաստակաշատ լեզվաբան, բազմաժանր մանկավարժ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Երևանի պետական համալսարանի անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Սեդա Քերոբի Գասպարյանը ծնվել է 1946 թ. հունիսի 30-ին Երևանում: 1963 թ. գերազանցությամբ ավարտելով միջնակարգ դպրոցը՝ վերին մի մղումով նա ընտրեց «Անգլերեն լեզու» մասնագիտությունը, որն էլ նրա բեղմնավոր կյանքի անբաժանելի ուղեկիցը դարձավ: Դեռևս ուսանողական տարիներին իր հետազոտական ու ստեղծագործական ակնհայտ կարողությունների շնորհիվ նա արժանացավ ակադեմիկոսներ Գևորգ Ջահուկյանի և Էդուարդ Աթայանի բարձր գնահատականին և համալսարանն ավարտելուց հետո նրանց իսկ երաշխավորությամբ աշխատանքի անցավ ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ամբիոնում:

Ընդգծված մասնագիտական կարողությունների ու հետևողական տքնաջան աշխատանքի շնորհիվ նա ամբիոնի լաբորանտից հասավ ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչի պատասխանատու պաշտոնին:

1983 թ. Ս. Գասպարյանը Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական, 1994 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ այնտեղ էլ գիտական իր բացառիկ խորաթափանցության շնորհիվ արժանանալով գործընկերների բարձր գնահատականին: 1989 թ. նրան

շնորհվել է դոցենտի, 2002 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 2014 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել և գիտական շրջանառության մեջ է մտել 28 թեկնածուական և 6 դոկտորական ատենախոսություն: Այսօր արդեն փաստ է, որ պրոֆեսոր Ս. Գասպարյանի հիմնադրած անգլիագիտական հետազոտությունների լեզվաբանական դպրոցը պատշաճ համարում ունի ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս:

Նրա գիտական գործունեությունը նվիրված է լեզվի և ոճի հարցերին, լեզվապոետիկայի, գործառական ոճագիտության, վերասույթային հնչյունաբանության, տեքստի մեկնաբանության, թարգմանության տեսության, հայագիտական խնդիրների և հակահայկական քարոզչության լեզվական ռազմավարությունների քննությանը: Անգնահատելի է նրա ավանդը գիտության և կրթության զարգացման գործում:

Հեղինակ է շուրջ 170 գիտական, գիտամեթոդական և ուսումնամեթոդական աշխատությունների. մենագրություններ, բուհական դասագրքեր ու ձեռնարկներ, գիտական հոդվածներ՝ հրատարակված ինչպես հայրենական, այնպես էլ արտերկրի առաջատար գիտական հանդեսներում: Հատկապես արժեքավոր են պրոֆեսոր Գասպարյանի հեղինակած մենագրությունները՝ նվիրված գեղարվեստական տեքստի ընկալման ու մեկնաբանման բազմաբարդ խնդիրների, դրանց մեթոդաբանության քննությանը: Առանձնահատուկ բարձր գնահատականի են արժանացել նաև (ինչպես հայրենական, այնպես էլ արտերկրի մասնագիտական շրջանակներում) Հայոց ցեղասպանությանը և դրան առնչվող բազմաթիվ հարցերի՝ լեզվաբանության արդի ուղղություններով կատարված քննության արդյունքները, որոնք ընթերցողին են ներկայացվել տարբեր մենագրություններով ու գիտական հոդվածներով՝ ըստ էության հետազոտական նոր արահետ բացելով ցեղասպանագիտական ուսումնասիրությունների դաշտում:

Ս. Գասպարյանը, բազմավաստակ գիտնական և վաստակաշատ մանկավարժ լինելուց զատ, նաև հմուտ գիտակազմակերպիչ է: Նրա նախաձեռնությամբ կազմակերպվել են հանրապետական ու միջազգային բազմաթիվ գիտաժողովներ, սեմինարներ ու քննարկումներ, որոնք լեզվի, գրականության ու մշակույթի ուսումնասիրության բնագավառում կարևոր ներդրում են ունեցել, նաև խթանել տեղի և արտերկրի գիտնականների համագործակցությունը:

Զեկուցումներով ու դասախոսություններով հանդես է եկել Անգլիայում, Իսպանիայում, Իտալիայում, Արգենտինայում, Հունաստանում, Սլովակիայում, Ռուսաստանում և այլուր:

1995-2019 թթ. եղել է ԵՊՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ, 2000-2019 թթ.՝ ՀՀ ԿԳ նախարարության մեթոդափնջման անգլերենի առարկայական հանձնաժողովի նախագահ: Նա ԵՊՀ, ինչպես նաև Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհուրդների անդամ է: 2003-ից Անգլերենի ուսումնասիրության եվրոպական ընկերության վարչության անդամ է և Եվրոպական դաշնության շրջանակներում գործող Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի հիմնադիր նախագահը:

2005-ից “Armenian Folia Anglistika” անգլերեն հրատարակվող գրախոսվող միջազգային հանդեսի հիմնադիրը և գլխավոր խմբագիրն է, 2009-2018 թթ. եղել է «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» հանդեսի հիմնադիրն ու գլխավոր խմբագիրը, 2006-2019 թթ.՝ անգլիագիտական հետազոտությունների “European Journal of English Studies” (Routledge: Taylor & Francis Group) հանդեսի խմբագրական խորհրդի խորհրդատվական հանձնախմբի անդամ: Ներկայումս էլ համագործակցում է տարբեր գիտական հանդեսների հետ՝ «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», «Բանբեր հայագիտության», «Հայագիտության հարցեր», “Science and Education: A New Dimension” (Hungary), “Cognition, Communication, Discourse” (Kharkov), “Professional Discourse and Communication” (Moscow State Institute of International Relations) և այլն:

Ս. Գասպարյանի հետաքրքրությունների լայն շրջանակը և միջազգային ճանաչման արժանացած նրա բազմաթիվ աշխատանքները վկայությունն են այն հեղինակության, որ նա վաստակել է երկարամյա գիտական գործունեության ընթացքում:

Գիտության, կրթության բնագավառներում ներդրած նշանակալի ավանդի, նաև գիտական միջազգային կապերի զարգացման գործում մատուցած ծառայությունների համար նա արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման (2013 թ.), ՀՀ վարչապետի հուշամեդալի (2009 թ.), Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակի (2009 թ.): Բազմիցս հաղթող է ճանաչվել ՀՀ գիտության պետական կոմիտեի հայտարարած «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթներում, պարգևատրվել է ԵՊՀ արծաթե և ոսկե հուշամեդալներով (1999 թ., 2006 թ.) և ՀՀ ԿԳ նախարարության պատվոգրերով (2004 թ., 2006 թ., 2008 թ. և այլն):

Նա ազնիվ, արդարամիտ ու սկզբունքային մարդ է և մեծ պատասխանատվությամբ, բժախնդրությամբ ու նվիրումով է վերաբերվում ձեռնարկած ցանկացած գործի, խստապահանջ է նախ իր, ապա դիմացինի նկատմամբ և չափազանց հոգատար իր շրջապատին:

Ողջունի խոսքով հանդես եկավ ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար ակադեմիկոս Գ.Գևորգյանը : Նա նշեց, որ Ս. Գասպարյանի մասին խոսելիս պետք է պարտադիր անդրադարձ կատարվի նրա մարդ տեսակին և խոսեց Ս.Գասպարյանի բարության, ներողամտության և մշտապես բոլորին աջակցելու կարողության մասին: Ռեկտորը չափազանց շատ կարևորեց Ս.Գասպարյանի գործունեությունը ԵՊՀ –ում թե՛ գիտության, թե՛ մանկավարժության բնագավառում: Գ.Գևորգյանը նշեց, որ հանդեսը, որը ղեկավարում է Ս.Գասպարյանը, թվում է, թե հետ պետք է ընկներ բնագիտական հանդեսներից, բայց դա բոլորովին էլ այդպես չէ: Շնորհիվ Ս.Գասպարյանի պրպտուն մտքի նրա կողմից գլխավորած հանդեսը մշտապես առաջինն է: Գ.Գևորգյանը Ս.Գասպարյանին Շուշիի գործարանում գործված խալի նվիրեց :

Խոսքով հանդես եկավ նաև փոխնախարար Կ.Թռչունյանը, շնորհավորեց Ս. Գասպարյանին և շնորհեց ԿԳՄՍ նախարարության ոսկե մեդալ ընթերցելով ԿԳՄՍ նախարարի հրամանը : Նա հավելեց նաև, որ Ս.Գասպարյանն ունի հարուստ կենսագրություն և նշեց, որ նման մարդիկ մշտապես պետք է մեծարանքի արժանանան: Նշվեց, նաև, որ Ս. Գասպարյանը ունի գիտակրթական իր արժանի ավանդը թե՛ միջազգային, թե՛ ազգային գիտական կյանքում:

Սրտի խոսքով հանդես եկավ պրոֆեսոր Գ.Մելիքյանը : Նա նշեց, որ Ս.Գասպարյանը իսկական հայ է, յուրօրինակ տեսակ, իր գործին նվիրյալ ու արժանի մարդ է: Նա խոսքը ավարտեց՝ ասմունքելով Ե.Չարենցի բանաստեղծությունից :

Խոսեց նաև ակադեմիկոս Ա.Մելքոնյանը, նշելով, որ Ս.Գասպարյանը ցանկացած մասնագիտության մեջ էլ կլիներ անթերի : Նա նշեց, Ս.Գասպարյանը ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ է վերաբերում իր կողմից կատարած ցանկացած աշխատանքին : Ա.Մելքոնյանը նշեց, որ Ս.Գասպարյանը զբաղվում է նաև ցեղասպանագիտական հարցերով և լուրջ հաջողություններ է ունեցել այդ բնագավառում : ՀՀ ԳԱԱ –ում Ս.Գասպարյանը մեծ հեղինակություն է վայելում իր ինտելեկտով, իր տեսակով, պահվածքով ու մշակույթով : Ա.Մելքոնյանը նշեց, որ ԳԱԱ-ն հարստացավ նաև Ս.Գասպարյանի ներկայությամբ և հավելեց, որ տարիները խոսում են այն հանգամանքի մասին, որ Ս.Գասպարյանը իր ուրույն ձեռագիրն ու դպրոցն ունի և նա չափազանց կարևոր անձ է թե՛ ԵԼՀ ֆակուլտետում, թե՛ ԵՊՀ ում և ԳԱԱ-ում: Նրա տեղը մշտապես լինելու է մնայուն :

Պատմաբանների շարքը լրացրեց նաև պրոֆեսոր Է.Մինասյանը : Նա նշեց, որ այն ինչ խոսվեց Ս.Գասպարյանի մասին միանգամայն ողջունելի է : Հայագիտության ասպարեզում մեծ ներդրում ունի Ս.Գասպարյանը, ոչ միայն ցեղասպանագիտության, այլ նաև լեզվի հարցերին նվիրված խնդիրների քննարկման՝ տեքստաբանության, պատմական տեքստերի մակնաբանության, ոճական հարցերի լուսաբանման հարցում : Է.Մինասյանը նշեց նաև, որ մեծ գիտական ավանդ ու վաստակ ունեցող մարդ է Ս. Գասպարյանը և ցեղասպանության հարցերին նվիրված նրա աշխատանքը մնայուն ու արժեքավոր աշխատություն է:

Խոսեց նաև ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ դոցենտ Ջ.Հարությունյանը: Նա ասաց, որ մեծ հպարտություն է զգում, որ իրեն բախտ է վիճակվել հոգված հրատարակել ԳԱԱ-ի հանդեսում նվիրված Ս.Գասպարյանին: Նրա խոսքով այդ հոգվածը մեծ արձագանք ստացավ: Ջ.Հարությունյանը հավելեց, որ Ս.Գասպարյանի կենսագրությունը շատ հազեցած է, որ նա այդ ամենին հեշտ չի հասել: Ջ.Հարությունյանը Ս.Գասպարյանին շնորհավորեց անակնկալ երգով:

Ս.Գասպարյանին շնորհավորեց նաև ԵԼՀ ֆակուլտետի նախկին դեկան Ս.Աբրահամյանը՝ նրան քաջ առողջություն և հաջողություն մաղթելով:

Ս.Գասպարյանին շնորհավորանք հղեց ՎՊՄՀ-ի պրոֆեսոր Թ.Շահվերդյանը՝ նշելով, որ նրանք միասին ուսանողական կյանք են անցել և Ս.Գասպարյանը միշտ հիացրել է շրջապատին իր գիտելիքով, տեսակով և արժանապատիվ հայի կեցվածքով: Թ.Շահվերդյանը ասաց, որ իր համար տոնական օր է, քանի որ նա իր սիրելի համալսարանականների հետ է և Ս.Գասպարյանին ցանկացավ անհետադարձ ճանապարհ և մշապես վերելքի ուղի: Նա նվիրեց Ս.Գասպարյանին « Հայոց լեզվի պատմական ձևաբանություն » իր մենագրությունը:

Ս.Գասպարյանին շնորհավորեց նաև պրոֆեսոր Ի.Կարապետյանը: Նա նշեց, որ Ս.Գասպարյանի մասին կարելի է երկար ու անկեղծ խոսել և նշեց, որ իր կյանքի մրցապայքարի մրցույթում միշտ պարտվում է Ս.Գասպարյանի մեծահոգությանը, մարդասիրությանն ու ազնվությանը: Նա հավելեց, որ Ս.Գասպարյանը ուսումնասիրում է պատմագիտության լեզուն անգլերեն լեզվով: Հենց այդ հանգամանքն էլ խոսում է նրա անմնացորդ հայրենասիրության մասին: Ի.Կարապետյանը ասաց, որ Ս.Գասպարյանը կարողանում է սիրել և դրանում է կայանում նրա մարդ տեսակի գաղտնիքը:

Խոսեց նաև ԵԼՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի պրոֆեսոր Շ.Պարոնյանը: Նա ողջունեց բոլորին, նշելով, Ս.Գասպարյանից միշտ կարելի է սովորել: Շ.Պարոնյանը ասաց, որ իր ամբիոնը անգլիական բանասիրության դուստր ամբիոնն է, որից ստացել է հարուստ ժառանգություն՝ դասախոսական կազմի առումով: Ս.Գասպարյանը այն անկյունաքարն ու շարժիչ ուժն է, որ ոգևորում է բոլորին: Նա շեշտեց նաև Ս.Գասպարյանի հայրենասիրությունը և հայերենասիրությունը: Նշվեց նաև, որ Ս.Գասպարյանը ցեղասպանության և հայագիտական հարցը հասցրել է միջազգային մակարդակի, ինչը նրա անուրանալի ու մեծ ավանդն է:

Ս.Գասպարյանին շնորհավորեց նաև իրավագիտության ֆակուլտետի դեկան ակադեմիկոս Գ.Ղազինյանը: Նա նշեց, որ Ս.Գասպարյանի գիտական և մանկավարժական ավանդը շատ գնահատելի է և Ս.Գասպարյանի ամենամեծ

արժանիքը համարեց արժանավոր սերունդներ կրթելը : Գ.Ղազինյանը մաղթեց Ս.Գասպարյանին, որ վայելի այն, ինչ ինքը տարիներ շարունակ ստեղծել է :

Ս.Գասպարյանին շնորհավորեց նաև արևելագիրության ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Ռ.Մելքոնյանը՝ նշելով, որ Ս.Գասպարյանը բազմալաստակ և խորը գիտնական է : Նա հավելեց, որ Ս.Գասպարյանը արխատկրատիզմի և ազգայինի ամենահաջողված համադրությունն է : Ռ.Մելքոնյանը նշեց նաև, որ Ս.Գասպարյանը ոչ միայն ֆակուլտետի, այլ ԵՊՀ-ի սիմվոլներից է : Նա կարևորեց նաև Ս.Գասպարյանի անգնահատելի աջակցությունը երիտասարդ սերնդին՝ պահպանելու և պաշտպանելու ազգայինը :

Խոսեց նաև ԵԼՀ անգլերենի թիվ 2 ամբիենի վարիչ պրոֆեսոր Ե.Երզնկյանը : Նա ամբիոնի անունից շնորհավորեց Ս.Գասպարյանին՝ նշելով, որ մեծ է նրա դերը անգլերեն լեզվի մասնագիտական խորհրդի կայացման հարցում : Նշվեց, որ երկար տարիներ Ս.Գասպարյանը դեկավարել է այդ խորհուրդը և 200- ից ավելի երիտասարդ գիտնականներին կանաչ ճանապարհ տվել :

Ս.Գասպարյանին շնորհավորեց նաև անգլիական բանասիրության դոցենտ Ռ.Առաքելյանը : Նա խոսեց իր և անգլիական բանասիրության ամբիոնի անունից՝ ջերմորեն շնորհավորելով և կարևորելով Ս.Գասպարյանի մեծ ներդրումը ամբիոնում յուրաքանչյուրի կյանքում : Նշվեց նաև, որ Ս. Գասպարյանը ոչ միայն լավ մարդ է, այլ լավ մասնագետ. նրանից կարելի միշտ սովորել՝ ինչպես սիրել հայրենիքը, ընկերոջը, երիտասարդին : Նա մշտապես երիտասարդ սերնդի կողքին է քաջալերելու , ոգևորելու և ճանապարհը հարթելու :

Գ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց բոլորին մասնակցության և սրտաբուխ խոսքերի համար և խոսքը փոխանցեց Ս.Գասպարյանին :

Ս.Գասպարյանը շնորհակալություն հայտնեց բոլորին, ասաց, որ չափազանց հուզված է խոսելու համար : Նա նշեց, որ բոլորի խոսքերն ու բարեմաղթանքները շատ պարտավորեցնող են, և դա էլ ենթադրում է, որ ինքն իր ապրած կյանքը աննպատակ չի վատնել, կարողացել է ինչ-որ բան ստեղծել հաջորդ սերունդներին փոխանցելու համար : Նա խոստովանեց՝ ներկա պահին մտքերն ու զգացմունքները շատ հակասական են՝ ելնելով երկրի անդառնալի կորուստների, ծանր իրավիճակի, հետպատերազմյան և քովիդային վիճակից : Ս.Գասպարյանը իր երախտագիտությունը հայտնեց բոլոր ներկաներին՝ հատուկ ընդգծելով, որ չափազանց զգացված է բարձր գնահատականի, խոսքերի, վերաբերմունքի, ջերմ մթնոլորտի համար, որին նրան արժանացրել են և հավելեց, որ պատրաստ է իր մայր բուհի բոլոր դժվարությունների հաղթահարման մեջ իր մասն ունենալ :

ԵԼՀ ֆակուլտետի

դեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Դալալյան

30.06.2021թ